ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/4902/02/24 ք. Երևան
27 Հունիսի 2024թ

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Ա. Սաֆարյանի (այսուհետ՝ Դատարան), քննության առնելով «Ագաստ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ «Տիգրան Մեծ» ԱԿ ՓԲ ընկերության (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ 16.01.2024 թվականին կնքված թիվ «Թ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-24/02/ԴԵՂ-2» ծածկագրով պայմանագրի միակողմանի (որոշ չափաբաժինների մասով) լուծումն անվավեր ճանաչելու պահանջի վերաբերյալ հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Տ

Հայցվորը էլեկտրոնային համակարգի միջոցով (այսուհետ՝ Համակարգ) 20.06.2024 թվականին հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Պատասխանողի՝ 16.01.2024 թվականին կնքված թիվ «Թ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-24/02/ԴԵՂ-2» ծածկագրով պայմանագրի միակողմանի (որոշ չափաբաժինների մասով) լուծումն անվավեր ճանաչելու պահանջի վերաբերյալ, որը ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Սաֆարյանին է բաշխվել 21.06.2024 թվականին:
Հայցադիմումը և կից փաստաթղթերը դատավոր Ա. Սաֆարյանի աշխատակազմին Համակարգի միջոցով հասանելի է դարձել 24.06.2024 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:
Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:
Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:
Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:
Միաժամանակ, Դատարանը գտնում է, որ Պատասխանող «Տիգրան Մեծ» ԱԿ ՓԲ ընկերությունից պետք է պահանջել «Թ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-24/02-ԴԵՂ-2» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 199-րդ, 200-րդ, 202-րդ, 234.5-րդ և 234.6-րդ հոդվածներով՝ Դատարանը.

ՈՐՈՇԵՑ

1. «Ագաստ» ՍՊ ընկերության ընդդեմ «Տիգրան Մեծ» ԱԿ ՓԲ ընկերության՝ 16.01.2024 թվականին կնքված թիվ «Թ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-24/02/ԴԵՂ-2» ծածկագրով պայմանագրի միակողմանի (որոշ չափաբաժինների մասով) լուծումն անվավեր ճանաչելու պահանջի վերաբերյալ հայցադիմումն ընդունել վարույթ:

2. «Տիգրան Մեծ» ԱԿ ՓԲ ընկերությունից պահանջել Դատարան ներկայացնել «Թ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-24/02-ԴԵՂ-2» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Արմինե Սաֆարյան

Digitally signed by SAFARYAN ARMINE
6107840465